Հարցաշար
«Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի
Հանրապետական փուլ-2023
10-րդ դասարան

№ 1-4
Ընտրովի պատասխանով առաջադրանքներ
(0,5 X 4 = 2 միավոր)

1. *Ո՞ր տիեզերական ժողովում ընդունվեց «Մի աստվածություն, երեք անձինք» բանաձևը.* *(0,5 միավոր)*
   1. Նիկեայի
   2. Կոստանդնուպոլսի
   3. Եփեսոսի
   4. Քաղկեդոնի

2. *Հայոց ո՞ր կաթողիկոսն է առաջին անգամ տեղեկություններ հաղորդել Գանձասարի վանքի մասին.* *(0,5 միավոր)*
   1. Ներսես Դ. Շնորհալի
   2. Ստեփանոս Գ. Սևանցի
   3. Բարսեղ Ա. Անեցի
   4. Անանիա Ա. Մոկացի

3. *Հայոց ո՞ր կաթողիկոսի մարմինն է ամփոփված Տարոնի Աշտիշատ գյուղում.* *(0,5 միավոր)*
   1. Սուրբ Սահակ Պարթև
   2. Սուրբ Արիստակես
   3. Սուրբ Ներսես Մեծ
   4. Սուրբ Գրիգոր Լուսավորիչ

4. *Ստորև թվարկվածներից ո՞րը չի բնորոշում քրիստոնեական բարոյականության երեք հիմնական դրսևորումները. հույսը, հավատը և սերը.* *(0.5 միավոր)*
   1. Կրոնական իմաստով սերը «ցանկալիի ու սպասելիի», այն է՝ աշխարհի արարչության և մարդու փրկության իրականանալիության համոզումն ու վստահությունն է:
   2. Քրիստոնեական իմաստով հույսի աղբյուրը, առարկան և նպատակն Աստված է:
   3. Քրիստոնեական իմաստով հույսի հիմքը հավատն է առ Աստված:
   4. Կրոնական իմաստով հավատը խարսխված է այն համոզմունքի վրա, թե Աստված մարդկային գիտակցությունից անկախ գոյություն ունեցող բացարձակ ճշմարտություն է:

№ 5-8

Կառուցված պատասխանով առաջադրանքներ

(1 X 4 = 4)

5. *Եկեղեցում _____ հյուսիսային կողմում գտնվում է մկրտության ավազանը, իսկ արևելյան կողմում՝ բեմը կամ խորանը:*
(1 միավոր)

6. *Սուրբ Ներսես Մեծը Մեծ Հայքի կաթողիկոս է օծվել ---------- քաղաքում:* *(1 միավոր)*

7. *«Երանի _____, որովհետև նրանք երկիրը պիտի ժառանգեն»:* *(1 միավոր)*

8. *_____ ուսմունքի համաձայն՝ մարդը կամքի ազատություն չունի, յուրաքանչյուր արարք նա կատարում է արտաքին ազդակների ճնշման տակ:*
(1 միավոր)

№ 9-10

Համապատասխանեցում պահանջող առաջադրանքներ

(1 x 2 = 2 միավոր)

9. *Կաթողիկոսների անունները համապատասխանեցնել նրանց գահակալման տարիներին տեղի ունեցած իրադարձություններին:* *(1 միավոր)*

1. Սուրբ Հովհաննես Գ. Օձնեցի
2. Գևորգ Բ. Գառնեցի
3. Սուրբ Ներսես Ա. Պարթև
4. Սարգիս Ա. Սևանցի
5. Կոստանդին Ա. Բարձրբերդցի
6. Սուրբ Հովսեփ Ա. Հողոցմեցի
7. Սուրբ Սահակ Ա. Պարթև
8. Անանիա Ա. Մոկացի
9. Սիմեոն Ա. Երևանցի
10. Աբրահամ Ա. Կրետացի

1	
2	
3	
4	
5	
6	
7	
8	
9	
10	

ա. Հայոց գրերի գյուտը
բ. Կաթողիկոսական աթոռի տեղափոխումը Կարս
գ. Վարդանանց պատերազմը
դ. Սսի եկեղեցական ժողովի գումարումը
ե. Դիվանագիտական սերտ հարաբերությունների հաստատումը Նադիր շահի հետ
զ. Տպարանի և թղթի գործարանի հիմնադրումը Էջմիածնում

է. Աշտիշատի ժողովի գումարումը
ը. Անկախ պետականության վերականգնումը, Աշոտ 1-ին Բագրատունու հռչակումը թագավոր
թ. Կաթողիկոսական աթոռի տեղափոխումը Անի
ժ. Դվինի եկեղեցական ժողովի գումարումը, պավլիկյան շարժման դեմ պայքարի ծավալումը

10. Հայոց կաթողիկոսների անունները համապատասխանեցնել գահակալման տարեթվերին: (1 միավոր)

1) Եփրեմ Ա. Զորագեղցի ա) 1858-1865 թթ.
2) Ներսես Ե. Աշտարակեցի բ) 1831-1842 թթ.
3) Դանիել Ա. Սուրմառեցի գ) 1809-1830 թթ.
4) Մկրտիչ Ա. Վանեցի դ) 1807-1808 թթ.
5) Հովհաննես Ը. Կարբեցի ե) 1843-1857 թթ.
6) Մատթեոս Ա. Կոստանդնուպոլսեցի զ) 1892-1907 թթ.
7) Մատթեոս Բ. Կոստանդնուպոլսեցի է) 1866-1882 թթ.
8) Գևորգ Դ. Կոստանդնուպոլսեցի ը) 1911-1930 թթ.
9) Գևորգ Ե. Տփղիսեցի թ) 1908-1910 թթ.

1	
2	
3	
4	
5	
6	
7	
8	
9	

№ 11

Ժամանակագրական հաջորդականության իմացություն պահանջող առաջադրանք

11. Հայ նշանավոր հոգևոր գործիչների անունները դասավորել ըստ նրանց գործունեության ժամանակագրական հաջորդականության. (1 միավոր)

ա. Դավիթ Անհաղթ
բ. Գրիգոր Նարեկացի
գ. Մովսես Տաթևացի
դ. Ներսես Շնորհալի
ե. Անանիա Շիրակացի
զ. Գրիգոր Տաթևացի
է. Եզնիկ Կողբացի
ը. Մխիթար Գոշ
թ. Հովհաննես Օձնեցի

1	
2	
3	
4	
5	
6	
7	
8	
9	

№ 12-13

Աշխատանք սկզբնաղբյուրով

(1 x 4 = 4 միավոր)

12. Կարդալ ստորև բերված տեքստը և պատասխանել հարցերին: *(2 միավոր)*

13-14-րդ դարերում ուսումնական մշակութային կյանքի նշանավոր կենտրոններից մեկն էր Գլաձորի վանքի համալսարանը: Նրա հիմնադրման թվականը ստույգ հայտնի չէ, բայց հավանական է, որ այն հիմնադրվել է 1280-ական թվականներին: Գլաձորի համալսարանը միջնադարում հայտնի է եղել որպես «…», «մայրաքաղաք իմաստունների» և այլն: Գլաձորի համալսարանում են ստեղծագործել բազմաթիվ գրիչներ և մանրանկարիչներ:

1. *Ո՞վ է մեջբերված հատվածի հեղինակը.* *(1 միավոր)*

_____

2. *Ըստ հեղինակի՝ ի՞նչ անունով է հայտնի եղել Գլաձորի համալսարանը միջնադարում.* *(1 միավոր)*

_____

13. Կարդալ ստորև բերված տեքստը և պատասխանել հարցերին: *(2 միավոր)*

«Նա շատ մեծ անուն էր հանել, անարատ և արդար մարդ էր, շատ առաքինի, հոետորական գիտության քաջագիտակ, Աստծո Հին ու Նոր Կտակարաններին քաջատեղյակ և ամեն տեսակետից կարող էր օգտակար լինել Քրիստոսի հոտին: … Նա հայոց ժողովրդի մեջ պայծառացրեց վանական դասը, նա էր, որ վերականգնեց Սուրբ Գրիգոր Լուսավորչի աթոռը Հայաստանում և փայլեց սրբությամբ և ամենայն պարկեշտությամբ: Նա պահեցող էր և աղոթող»:

1. *Ո՞ր կաթողիկոսի մասին է մեջբերված հատվածը:* *(1 միավոր)*

_____

2. *Ո՞վ է մեջբերված խոսքերի հեղինակը:* *(1 միավոր)*

_____

№ 14-15

Տերմինների, հասկացությունների, պատճառահետևանքային կապերի, փաստերի իմացություն և խմբավորում պահանջող առաջադրանքներ

14.1. Ի՞նչ սկզբունքով է կազմված շարքը: Տվյալ շարքում ո՞ր անունը չի համապատասխանում շարքի կառուցման սկզբունքին: ***(0,5 միավոր)***

Գրիգոր քահանա Ավագյան, Հակոբ քահանա Սառիկյան, Վարդան քահանա Նալբանդյան, Կոմիտաս քահանա Սարգսյան:

_____

_____

14.2. Ի՞նչ սկզբունքով է կազմված Հայոց եկեղեցու տոների շարքը: Տվյալ շարքում ո՞րն է սխալ: ***(0,5 միավոր)***

Սուրբ Ծնունդ, Տյառնընդառաջ, Խաչվերաց, Սուրբ Հարություն, Սուրբ Սարգիս, Կաթողիկե Սուրբ Էջմիածնի տոն, Մարիամ Աստվածածնի վերափոխման տոն, Համբարձման տոն,

_____

_____

15.1. Գտնել ճիշտ շարքը: Ի՞նչ սկզբունքով է այն կազմված: ***(0,5 միավոր)***

ա. Աղվեն, Դվին, Աշտիշատ, Շուղրի Կարմիր վանք, Կարս, Շիրակավան, Արտաշատ
բ. Արտաշատ, Տաթև, Էջմիածին, Դվին, Աղթամար, Արգինա, Աղվեն
գ. Սիս, Աշտիշատ, Հռոմկլա, Արտաշատ, Շահապիվան, Սեբաստիա, Էջմիածին

_____

_____

15.2. Գտնել ճիշտ շարքը: Ի՞նչ սկզբունքով է այն կազմված: ***(0,5 միավոր)***

ա. Ժուժկալություն, խոնարհություն, գթառատություն, եղբայրասիրություն, արդարամտություն, աշխատասիրություն, ողորմածություն:
բ. Աշխատասիրություն, ժուժկալություն, ողջախոհություն, խոնարհություն, հեզություն, ողորմածություն, եղբայրասիրություն:
գ. Եղբայրասիրություն, ողջախոհություն, ժուժկալություն, խոնարհություն, արդարամտություն, բարություն, ողորմածություն:

_____

_____

15.3. Ի՞նչ սկզբունքով է կազմված ճիշտ շարքը. ճիշտ շարքին ավելացնել առնվազն մեկ անվանում: *(1 միավոր)*

ա. Հայոց Եկեղեցի, Ղպտի (եգիպտական) Եկեղեցի, Եզդի Ուղղափառ Եկեղեցի, Հույն Ուղղափառ Եկեղեցի …

բ. Հայոց Եկեղեցի, Ղպտի (եգիպտական) Եկեղեցի, Ասորի Ուղղափառ Եկեղեցի, Եթովպիական Ուղղափառ Եկեղեցի …

գ. Հույն Ուղղափառ Եկեղեցի, Ռուս Ուղղափառ Եկեղեցի, Ասորի Ուղղափառ Եկեղեցի, Եթովպիական Ուղղափառ ե Եկեղեցի …

_____

_____

№ 16-17

Նկար-առաջադրանքներ)

16·

16.1. Ո՞վ է պատկերված նկարում: *(0,5 միավոր)*

_____

16.2 . Ո՞րն է եղել նրա և նրա աշակերտների հավատամքը: (0,5 միավոր)

_____

17. Ո՞ր եկեղեցիներն են պատկերված նկարում: Նշել եկեղեցու գտնվելու վայրը և անվանումը:
17.1 (0,5 միավոր) *17.2. (0,5 միավոր)*

1. _____

2. _____

№ 18

Շարադրանք (2 միավոր)

1. *Ե՞րբ և որտե՞ղ են հրավիրվել քրիստոնեական եկեղեցու առաջին երեք տիեզերական ժողովները: Ե՞րբ են տեղի ունեցել քրիստոնեական եկեղեցու առաջին և երկրորդ մեծ բաժանումները, այդ բաժանումներով քրիստոնեության մեջ ի՞նչ հիմնական ուղղություններ ձևավորվեցին: (0,5 միավոր)*
2. *Թվարկել Հայ Առաքելական Եկեղեցու յոթ խորհուրդները: Որո՞նք են քրիստոնյայի համար պարտադիր և կամավոր խորհուրդները: Ձեր ընտրությամբ ներկայացրեք այդ խորհուրդներից մեկը (Խորհրդի իմաստը, կարգը): (0,5 միավոր)*
3. *Թվարկել Հայ Առաքելական Եկեղեցու տաղավար տոները և նշել տարվա ընթացքում դրանց տոնման օրն ու ժամանակահատվածը: Ներկայացնել Սուրբ Հարության տոնը (Տոնի իմաստը, տոնակատարությունը): (0,5 միավոր)*
4. *Ի՞նչ տեղեկություններ կան Աստվածաշնչում Հայաստանի մասին: (0,5 միավոր)*